ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՆՔԸ

«ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ԴՐԱ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ» ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՍՏՈՐԱԳՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի Խորհրդի կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա) ուժի մեջ է մտել 2014 թվականի օգոստոսի 1-ին: Կոնվենցիան նպատակ է հետապնդում պաշտպանել կանանց բռնության բոլոր ձևերից և կանխարգելել, վերացնել կանանց նկատմամբ բռնությունն ու ընտանեկան բռնությունը, նպաստել կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացմանն ու խթանել կանանց և տղամարդկանց միջև հավասարությունը: Կոնվենցիան նպատակաուղղված է նաև մշակելու կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության բոլոր զոհերի պաշտպանությանն ու նրանց աջակցություն տրամադրելուն ուղղված իրավական նորմերի համապարփակ շրջանակ, օժանդակություն և աջակցություն տրամադրելու կազմակերպություններին և իրավապահ մարմիններին՝ բռնությունը վերացնելու ուղղությամբ միասնական մոտեցում ձևավորելու նպատակով արդյունավետորեն համագործակցելու համար:

Կոնվենցիայի դրույթների արդյունավետ կիրարկումն ապահովելու նպատակով սահմանվում է մոնիթորինգի հատուկ մեխանիզմ, իսկ Կողմերը ձեռնարկում են անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ՝ խթանելու և պաշտպանելու համար յուրաքանչյուրի, հատկապես՝ կանանց իրավունքը՝ ապրելու առանց բռնության՝ ինչպես հանրային, այնպես էլ անձնական ոլորտներում: Այս

միջոցառումները, անհրաժեշտության դեպքում, պետք է ներառեն այնպիսի ծառայություններ, ինչպիսիք են իրավաբանական և հոգեբանական խորհրդատվությունը, ֆինանսական աջակցությունը, կացարանով ապահովումը, կրթությունը, վերապատրաստումն ու աշխատանք գտնելու հարցում աջակցությունը:

Կոնվենցիայով սահմանված կանխարգելիչ միջոցառումների շրջանակում Կողմերը պարտավորվում են ձեռնարկել անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ՝ կանխելու համար ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից Կոնվենցիայի գործողության ոլորտում ընդգրկվող բռնության ցանկացած ձևի դրսևորում:

Կոնվենցիայի դրույթներին համահունչ՝ Կողմերը կանոնավոր հիմունքներով և բոլոր մակարդակներով խթանում են իրազեկության բարձրացմանն ուղղված արշավների կամ ծրագրերի անցկացումը՝ համագործակցելով մարդու իրավունքների ներպետական կառույցների և հավասարության հարցերով մարմինների, քաղաքացիական հասարակության ու հասարակական կազմակերպությունների հետ՝ բռնության բոլոր ձևերի տարբեր դրսևորումների, դրանց հետևանքների և նման բռնությունը կանխելու անհրաժեշտության մասին լայն հասարակության իրազեկության և ընկալման մակարդակը բարձրացնելու նպատակով:

Կողմերը, ներպետական օրենքով սահմանված կարգով, ձեռնարկում են անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ՝ ապահովելու համար համապատասխան այնպիսի մեխանիզմների առկայությունը, որոնք արդյունավետ համագործակցություն կապահովեն շահագրգիռ բոլոր գերատեսչությունների, այդ թվում՝ դատական մարմինների, դատախազության, իրավապահ մարմինների, տեղական և տարածքային իշխանությունների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ու այլ շահագրգիռ կազմակերպությունների ու մարմինների միջև՝ Կոնվենցիայի գործողության ոլորտում ընդգրկվող բռնության բոլոր ձևերի զոհերին ու վկաներին պաշտպանելու և օժանդակելու գործում:

ՀՀ վարչապետի 2016 թվականի հունիսի 28-ի N 567-Ա որոշմամբ ձևավորված աշխատանքային խմբի կողմից մշակվել է «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը համահունչ է Կոնվենցիայի դրույթներին: Օրենքի նախագիծը 2017 թվականի նոյեմբերի 16-ին արժանացել է ՀՀ կառավարության հավանությանը և գտնվում է ՀՀ Ազգային ժողովի նստաշրջանի օրակարգում:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ «Ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ բռնության կանխարգելման և պայքարի մասին» ԵԽ կոնվենցիայի ստորագրումը գտնում ենք նպատակահարմար:

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ՎԻԳԵՆ ՔՈՉԱՐՅԱՆ